ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2022, № 1, 21-34 *Կառավարում*
https://doi.org/10.46991/BYSU:G/2022.13.1.021

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ներկայումս բարձրագույն կրթության կարևոր բնութագրիչներից է զանգվածայնացումը, որը նպաստում է բարձրագույն կրթություն ստացողների թվի շարունակական աճին: Սակայն բարձրագույն կրթությանը դեռևս բնորոշ է «էլիտարիզմը»՝ բնակչության աղքատ ու խոցելի այլ խմբերի թերներգրավվածությամբ: Հոդվածում ուսումնասիրվել է Հայաստանում բարձրագույն կրթության և աղքատության փոխկապակցվածությունը՝ որպես սոցիալական ուղղվածության առանցքային հարց՝ համադրելով այն տարբեր երկրներում իրավիճակի հետ: Ուսումնասիրությունն իրականացվել է ֆինանսատնտեսական վերլուծության և կրթական հետազոտությունների մեթոդաբանական բաղադրիչների համադրմամբ: Հավաքված տվյալների վերլուծության հիման վրա կատարված հաշվարկները հստակ ցույց են տալիս, որ Հայաստանում չի ապահովվում բարձրագույն կրթության հավասար մատչելիությունը, մասնավորապես՝ բուհ ընդունվելու, բուհում սովորելու և այն հաջող ավարտելու հնարավորությունները խիստ անհավասար են բնակչության աղքատ և բարեկեցիկ ընտանիքներից երիտասարդների համար, և որ ուսման վարձավճարներն ու ուսման հետ կապված այլ ծախսերը բարձրագույն կրթություն ստանալու իրական խոչընդոտներ են: Հետազոտության եզրակացություններից ակնհայտ է դառնում, որ աղքատությունը բարձրագույն կրթություն ստանալու իրական խոչընդոտ է, իսկ բարձրագույն կրթություն չունենալը՝ աղքատ մնալու իրական վտանգ:

Բանալի բառեր – *բարձրագույն կրթություն, աղքատություն, սոցիալական արդարություն, սոցիալական ուղղվածություն, ուսման վարձ, մատչելիություն, ընդգրկվածություն*

Ներածություն

Բոլոնիայի գործընթացի սկիզբն ազդարարվեց 1999 թ. հունիսի 19-ին Իտալիայի Բոլոնիա քաղաքում եվրոպական 29 երկրների կողմից համագործակցության հռչակագրի ստորագրումով: Թե՛ հռչակագիրը, թե՛ գործընթացը ստացան «Բոլոնիա» անվանումը՝ խորհրդանշելով գործընթացի մեկնարկի և հռչակագրի ստորագրման վայրը: Հետագա 22

* Սույն հոդվածում արտացոլված է հետազոտության արդյունքների մի մասը, որ հիմնականում առնչվում է ուսումնասիրության մեթոդաբանությանը, միջազգային փորձին, ոլորտի իրավական կարգավորումներին: Հայաստանում իրավիճակի առանձնահատկությունների վերաբերյալ համապարփակ հետազոտության արդյունքները կներկայացվեն հաջորդ հոդվածում:

տարիներին Բոլոնիայի գործընթացին միացավ ևս 20 երկիր, այդ թվում՝ Հայաստանը՝ձևավորելով Եվրոպական բարձրագույն կրթական տարածքը (այսուհետ՝ ԵԲԿՏ)։ Վերջինս բարձրագույն կրթության ոլորտում միջազգային եզակի համագործակցություն է, քանի որ պատմամշակութային ու գիտակրթական տարբեր ավանդույթներ և քաղաքական կառուցվածք ունեցող 49 երկիր, ստանձնելով միասնական պարտավորություններ, քայլ առ քայլ համատեղ իրականացրել են կառուցվածքային բարեփոխումներ և ներդրել են ընդհանուր գործիքներ, որոնք ուղղված են իրենց բարձրագույն կրթության համակարգերն ավելի համադրելի դարձնելուն, բուհերի ուսանողների և աշխատողների շարժունությունն ապահովելուն, ակադեմիական ազատությունները և բուհերի ինքնավարությունը բարձրացնելուն և այլ նպատակների իրականացմանը։ Բոլոնիայի գործընթացը ներկայումս իրականացվում է 10-ից ավելի ուղղություններով, և ամենակարևորներից է բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածությունը, որի նպատակն է բարձրացնել բարձրագույն կրթության մեջ սովորողների ընդգրկվածությունը՝ թիրախավորելով հատկապես բնակչության խոցելի, այդ թվում՝ աղքատ խմբերը[1]։

Այսպես, 2020 թ. Հռոմում կայացած ԵԲԿՏ վերջին նախարարական գագաթնաժողովի կոմյունիկեում ԵԲԿՏ երկրներն ամրագրել են, որ պարտավորվում են մինչև 2030 թ. կառուցել ներառական, նորարար և միասնական ԵԲԿՏ։ Ընդ որում՝ առանձնակի կարևորվել է ԵԲԿՏ-ի ***ներառականությունը,*** քանի որ միայն այդ դեպքում «*յուրաքանչյուր անձի համար բարձրագույն կրթությունը կլինի հավասարապես մատչելի, և յուրաքանչյուր սովորող իր ուսումնառությունն ավարտելու համար կստանա լիարժեք աջակցություն*»։ Հռոմի կոմյունիկեի առանձին հավելվածով հաստատվել է նաև «Բարձարգույն կրթության սոցիալական ուղղվածության սկզբունքները և ուղեցույցները ԵԲԿՏ-ում» փաստաթուղթը, որում ամրագրված է, որ *«սոցիալական ուղղվածությունը պետք է գրավի կենտրոնական դիրք բարձրագույն կրթության ռազմավարություններում ինչպես համակարգային և ինստիտուցիոնալ, այնպես էլ ԵԲԿՏ և Եվրամիության մակարդակներում»*[2]։

Սոցիալական ուղղվածության խնդիրները քննարկվել էին նաև 2005 թ. Երևանում կայացած ԵԲԿՏ նախարարական գագաթնաժողովում և «Երևանի կոմյունիկեում» ևս ամրագրվել էր, որ ԵԲԿՏ-ի կարևորագույն նպատակներից է բարձրագույն կրթության ներառականությունը, քանի որ ԵԲԿՏ երկրների բնակչությունը դառնում է ավելի ու ավելի բազմատարր՝ պայմանավորված ժողովրդագրական, միգրացիոն

[1] Տե՛ս BFUG Working Group on the Social Dimension and Lifelong Learning 2012-2015, Report, http://www.ehea.info/pid34436/social-dimension.html

[2] Rome Ministerial Communiqué, Annex 2 “Principles and Guidelines to Strengthen the Social Dimension of Higher Education in the EHEA”, 19 November, 2020, p. 4, http://www.ehea.info/Upload/Rome_Ministerial_Communique_Annex_II.pdf

և սոցիալական փոփոխություններով: Ըստ այդմ՝ ԵԲԿՏ երկրների կառավարությունները պարտավորվել են ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ մեծացնելու բարձրագույն կրթություն ստացողների ընդգրկվածությունը բուհերին աջակցություն տրամադրելով, խթանելու սոցիալական ուղղվածությունը և մեծացնելու բնակչության խոցելի խմբերի համար բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները[3]:

Պետք է նշել, որ նախորդ դարի 60-70-ականներից նախ ԱՄՆ-ի, այնուհետև տարբեր երկրների բարձրագույն կրթության համակարգերում արձանագրվեց ուսանողների թվի աննախադեպ աճ: Այսօր էլ ողջ աշխարհում բարձրագույն կրթության կարևոր բնութագրիչներից է զանգվածայնացումը՝ սովորողների թվի շարունակական աճը: Այնուամենայնիվ, բարձրագույն կրթությունը շարունակում է կրել «էլիտարիզմի» դրոշմը՝ բարեկեցիկ խավերից ուսանողների զգալիորեն մեծ մասնաբաժնով և բնակչության անապահով ու այլ խոցելի խմբերի թերներգրավվածությամբ[4]:

Նշված խնդիրն առկա է նաև Հայաստանում: Մինչդեռ մարդկային ներուժի լիարժեք օգտագործման, քաղաքացիների բարեկեցության ապահովման և երկրի կայուն տնտեսական աճի տեսանկյուններից անհերքելի է բարձրագույն կրթության ոլորտում սոցիալական արդարության և հավասար մատչելիության հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը: Աներկբա է, որ խելացի որևէ երիտասարդի բարձրագույն կրթություն չստանալը մարդկային ներուժի կորուստ է ցանկացած երկրի[5], առավել ևս Հայաստանի համար՝ հաշվի առնելով բնակչության ոչ մեծ թվաքանակը: Ուստի Հայաստանի բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության և վերջինիս համատեքստում բարձրագույն կրթության ու աղքատության և համակարգի ֆինանսավորման հարցերի ուսումնասիրումը խիստ արդիական է:

I. «Սոցիալական ուղղվածություն» հասկացության ծագումն ու ընդգրկումը Բոլոնիայի գործընթացի օրակարգում և դրա գիտամեթոդական հիմքերը

Սոցիալական ուղղվածությունը Բոլոնիայի գործընթացի օրակարգային հարց է դարձել 2001 թ. Պրահայում կայացած ԵԲԿՏ նախարարական գագաթնաժողովում և որպես եզրույթ առաջին անգամ պաշտոնապես կիրառվել է Պրահայի կոմյունիկեում[6]:

Սակայն իրադարձությունների ընթացքը ճիշտ ներկայացնելու հա-

---

[3] Տե՛ս Yerevan Communiqué, 2015, էջ 2, http://www.ehea.info/media.ehea.info/file/2015_Yerevan/70/7/YerevanCommuniqueFinal_613707.pdf

[4] Տե՛ս **Marginson S.**, The Worldwide Trend to High Participation Higher Education: Dynamics of Social Stratification in Inclusive Systems, Higher Education, 72, 2016, էջ 413–434:

[5] Տե՛ս **Salmi J.**, Social Dimension Within a Quality Oriented Higher Education System// Curaj A., Deca L., Pricopie R. (eds) European Higher Education Area: The Impact of Past and Future Policies, Springer, Cham, 2018, էջ 141-154:

[6] Տե՛ս Towards the European Higher Education Area, Communiqué of the Meeting of European Ministers in Charge of Higher Education in Prague on May 19th 2001, էջ 3, http://www.ehea.info/media.ehea.info/file/2001_Prague/44/2/2001_Prague_Communique_English_553442.pdf

մար պետք է նշել, որ սոցիալական ուղղվածության մասին քննարկումները համաեվրոպական թատերաբեմ են բերվել ուսանողների կողմից՝ նրանց լոբբիստական գործողությունների շնորհիվ[7]: Մասնավորապես՝ Պրահայի գագաթնաժողովին ընդառաջ Ուսանողների եվրոպական միությունը (ՈԻԵՄ)[8] Գյոթեբորգում կայացած իր հերթական հավաքի ժամանակ ընդունել է հռչակագիր, որում նշել է, որ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղություններում անտեսվել են ուսանողների սոցիալական խնդիրներին առնչվող հարցերը, և ընդգծել, որ երկրների կառավարությունները կրում են իրենց բոլոր քաղաքացիների՝ անկախ նրանց սոցիալական վիճակից, բարձրագույն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ ապահովելու պատասխանատվությունը[9]:

Գյոթեբորգի հռչակագիրն ՈԻԵՄ-ը ներկայացրել է Պրահայի գագաթնաժողովի մասնակիցներին՝ սոցիալական ուղղվածությունը Բոլոնիայի գործընթացի նպատակների մեջ ներառելու պահանջով, ինչն ի կատար է ածվել[10]: Կարելի է փաստել, որ ուսանողների ջանքերի շնորհիվ սոցիալական ուղղվածությունն առանցքային տեղ գրավեց ինչպես համաեվրոպական, այնպես էլ առանձին երկրների բարձրագույն կրթության բարեփոխումներում: Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ սոցիալական ուղղվածության հարցերի կարևորմանն աջակցել են նաև Եվրոպական խորհուրդը, Եվրոպական հանձնաժողովը և «Միջազգային կրթություն» կազմակերպությունը[11]:

Այնուամենայնիվ, մինչև 2005 թ. սոցիալական ուղղվածությունը չէր դիտվում որպես Բոլոնիայի գործընթացի ռազմավարական առանձին նպատակ և քննարկվում էր այլ ուղղությունների համատեքստում: Միայն 2005 թ. Բերգենի նախարարական գագաթնաժողովի ժամանակ սոցիալական ուղղվածությունը առանձնահատուկ կարևորվեց, և այն ամրագրվեց որպես Բոլոնիայի գործընթացի ռազմավարական առանձին ուղղություն[12]: Մինչ օրս «սոցիալական ուղղվածություն» հասկացության հստակ սահմանումը տրված չէ, բայց դրա բովանդակային հանգամանալից մեկնաբանումը ներկացված է 2007 թ. Լոնդոնի կոմյունիկեում. *«Բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում և փուլերում՝ ընդունելության, ուսումնառության և ավարտելու, ուսանողական համակազմը*

---

[7] Տե՛ս **Zgaga P.,** The Social Dimension in the European Higher Education Area. In Baranović, B. (ed.), 2015. Koji srednješkolci namjeravaju studirati? Pristup visokom obrazovanju i odabir studija [Which High School Students Plan to Study? Access to Higher Education and the Selection of Studies]. (Biblioteka Znanost i društvo, 37), 2015, էջ 217 (էջ 211-233):

[8] Ուսանողների եվրոպական միություն (ESU, նախկինում՝ ESIB):

[9] Տե՛ս ESIB. Student Göteborg Declaration The Student Göteborg Convention, 22nd to the 25th of March 2001, p.1, http://www.aic.lv/ace/ace_disk/Bologna/maindoc /STUD_GOETEB.pdf

[10] Տե՛ս **Klemenčič M.**, How ESIB- the National Union of Students Got into the Bologna Process. In Ivosević V., Päll A. and M. Vukasović. ESU turns 30! Fighting for Student Rights Since 1982. Brussels: European Students' Union, 2012, էջ 26-27), http://scholar.harvard.edu/files/manja_klemencic/files/2012_klemencic_how_esib_got_into_bologna_process.pdf?m=1444558454_

[11] Տե՛ս **Zgaga P.,** նշվ. աշխ., էջ 217:

[12] Տե՛ս **Kooij Y.**, European Higher Education Policy and the Social Dimension: A Comparative Study of the Bologna Process, Palgrave Macmillan, 2015, էջ 58:

պետք է արտացոլի բնակչության ողջ բազմատարրությունը: Ուսանողները պետք է կարողանան ավարտին հասցնել իրենց ուսումն առանց սոցիալական և տնտեսական խնդիրների հետ կապված խոչընդոտների»[13]:

Սոցիալական ուղղվածության վերաբերյալ հետագա քննարկումներն ու հետազոտությունները հանգեցրին այդ հասկացության ավելի խորքային մեկնաբանմանը՝ հիմնված միմյանցից բխող հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- բարձրագույն կրթությունն անձի հիմնարար իրավունք է,
- բարձրագույն կրթությունը հանրային բարիք է, ուստի դրա ապահովումը պետական պատասխանատվություն է,
- բարձրագույն կրթությունը պետք է առաջնորդվի սոցիալական արդարության և հավասարության սկզբունքներով՝ ապահովելով բնակչության բոլոր, հատկապես սոցիալապես անապահով ու այլ խոցելի խմբերի անձանց՝ բարձրագույն կրթություն ստանալու և ուսումնառությունը հաջող ավարտելու հավասար հնարավորություններ,
- բարձրագույն կրթությունը պետք է ապահովի որակյալ աշխատուժի պատրաստում՝ որպես մրցունակ և գիտելիքահենք տնտեսության հիմնական գրավական,
- բարձրագույն կրթությունը պետք է նպաստի ուսանողների աշխատաշուկա սահուն անցնելուն[14]:

Այս սկզբունքներից հետևում է, որ սոցիալական ուղղվածությունը մի կողմից առերեսվում է երկրների տնտեսական մրցունակության և գիտելիքահենք տնտեսության կառուցման խնդրի հետ, մյուս կողմից՝ վեր է հանում բարձրագույն կրթության հավասար հնարավորությունների ապահովումը խոչընդոտող հիմնական գործոնները և առաջարկում դրանց վերացման ուղիներ[15]: Սակայն մի շարք հետազոտություններում բարձրացվում է այն հարցը, որ հնարավոր չէ երաշխավորել բարձրագույն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ՝ ապահովելով սոցիալական արդարություն, և միաժամանակ խթանել երկրի տնտեսական մրցունակությունը, քանի որ այդ երկու մոտեցումները միմյանց հակասում են: Մրցակցությունն աստիճանաբար հանգեցնում է բարձրագույն կրթությունը որպես շուկայական ծառայություն և ոչ թե որպես հանրային բարիք դիտարկելուն[16]: Ուստի, պետությունների համար բարձրագույն կրթության հավասար հնարավորութ-

---

[13] Towards the European Higher Education Area: Responding to Challenges in a Globalised World. London Communiqué, 18 May, 2007, p. 5, http://www.ehea.info/Upload/document /ministerial_declarations/2007_London_Communique_ English_588697.pdf

[14] Տե՛ս Equality in a Knowledge-based Society - How to Widen Opportunities? (Best Practices in National Action Plans), General Report of the Official Bologna Process Seminar, 10-11 November 2008, Budapest, Hungary, preprared by Katalin Tausz and Katalin Gyöngyösi, էջ 12, http://www.aic.lv/ace/ace_disk/2007_09/sem07_09/Budap_socdim/General_report.pdf

[15] Տե՛ս **Zgaga P.**, նշվ. աշխ., էջ 217:

[16] Տե՛ս **Hackl E.**, The Intrusion and Expansion of Community Policies in Higher Education, Higher Education Management, 2001, 13 (3), էջ 115 (էջ 99-117):

յունների ապահովումը, ինչն անհրաժեշտ է սոցիալական արդարության հասնելու և բոլոր երիտասարդների ներուժը լիարժեք ու լավագույնս իրացնելու համար, փաստացի դառնում է շատ դժվար իրագործելի խնդիր[17]: Ելնելով նշված նկատառումներից՝ սոցիալական արդարության հասնելու մեխանիզմների ուսումնասիրումը առավել կարևորվեց և 2008-2010 թթ.-ից ուսանողների սոցիալական խնդիրների շուրջ հետազոտությունների թիվը զգալիորեն ավելացավ:

Սոցիալական ուղղվածության հարցերին առանձնակի կարևորություն հաղորդեց Եվրոպական հանձնաժողովի «Եվրոստուդենտ» ծրագրի շրջանակներում կատարված յոթ հետազոտությունների շարքը՝ նպատակաուղղված ԵԲԿՏ երկրների ուսանողների սոցիալ-տնտեսական խնդիրների վերհանմանն ու վերլուծությանը[18]: Այդ հետազոտությունների շարքի 2009 թ. զեկույցում առաջին անգամ համակարգված և խորությամբ ներկայացվեցին սոցիալական ուղղվածության վերաբերյալ մինչ այդ կատարված տարբեր ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև՝ ԵԲԿՏ անդամ 46 երկրներից և ԵԲԿՏ ոչ անդամ 5 երկրներից (ԱՄՆ, Ավստրալիա, Կանադա, Նոր Զելանդիա, Ճապոնիա) հավաքված տվյալներն ու դրանց համեմատական վերլուծության արդյունքները: Վերլուծությունը հիմնված էր 18 հիմնական ցուցանիշների վրա, որոնք բնութագրում էին բարձրագույն կրթության մատչելիությունը, սովորողների սոցիալական ծագումը և դրանով պայմանավորված՝ նրանց ուսումնառության արդյունքները, բարձրագույն կրթության վրա կատարվող պետական և մասնավոր ծախսերը, սովորողների շարժունությունը, շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունները, բարձրագույն կրթության ազդեցությունը գործազրկության ու շրջանավարտների եկամտի վրա և այլն[19]: Զեկույցում ներկայացվեցին *«հուսալի և համադրելի տվյալներ ԵԲԿՏ-ում սոցիալական ուղղվածության հիմնական բաղադրիչների վերաբերյալ»*[20]:

2018 թ. հրապարակվեց «Եվրոստուդենտ» հետազոտության նախավերջին (6-րդ փուլի) զեկույցը, որում ներկայացվեցին *«ընդգրկուն և միջերկրային համեմատական տվյալներ»*՝ նպատակաուղղված ԵԲԿՏ երկրների բարձրագույն կրթության համակարգերի սոցիալական ուղղվածության բարելավման քաղաքականության մշակմանը[21]: Հետազոտությունը կրկին հիմնված էր հստակ մշակված ցուցանիշների համախմբի վրա, որոնք հաշվարկելու համար տվյալները ստացվել էին

[17] Տե՛ս **Salmi J.**, նշվ. աշխ., էջ 141-154:

[18] Տե՛ս «Եվրոստուդենտ» ծրագրի կայք, https://www.eurostudent.eu/about

[19] Տե՛ս The Bologna Process in Higher Education in Europe: Key indicators on the social dimension and mobility, Eurostat – Eurostudent.eu, 2009, էջ 29-34, https://www.eurostudent.eu/download_files/documents/KS-78-09-653-EN.pdf

[20] Նույն տեղում:

[21] Տե՛ս **Gwosć C., Vögtle E.M., Hauschildt K.**, Social and Economic Conditions of Student Life in Europe: Eurostudent VI, 2016–2018: Synopsis of Indicators, 2018, էջ 16, https://www.eurostudent.eu/download_files/documents/EUROSTUDENT_VI_Synopsis_of_Indicators.pdf

ԵԲԿՏ անդամ 28 երկրների ավելի քան 320000 ուսանողների շրջանում կատարված հարցումներից: Ցուցանիշների համադրմամբ վեր հանվեցին բարձրագույն կրթության մատչելիությանն ու ընդգրկվածությանը, ինչպես նաև սովորողների ուսումնառությանը, աշխատանքի ու կյանքի պայմաններին, շարժունությանը վերաբերող խնդիրները: Հետազոտության արդյունքերում ներկայացվեց մասնակից երկրների բարձրագույն կրթության սոցիալ-տնտեսական խնդիրների համեմատական վերլուծությունը: Հետազոտության հիմնական եզրահանգումներից կարևոր է առանձնացնել հետևյալները[22].

- երկրների 60%-ում ուսանողները, որոնց ծնողները բարձրագույն կրթություն չունեն, փոքրամասնություն են,
- ուսանողների 51%-ն աշխատում է, ընդ որում՝ հիմնականում ուսման վարձը վճարելու համար,
- ուսանողների գրեթե 50%-ի ուսման վարձը վճարում են նրանց ընտանիքի անդամները,
- ուսանողների 23%-ը ուսման վարձ վճարելուց բացի, հոգում է նաև իր կեցության ծախսերը, ինչը լրացուցիչ ֆինանսական բեռ է,
- երկրների 64%-ում ուսանողները գերադասում են ուսման ընթացքում բնակվել ծնողների հետ՝ լրացուցիչ կեցության ծախսեր չվճարելու համար,
- շարժունության ծրագրերին մասնակցելու հիմնական խոչընդոտն ուսանողների համար ֆինանսականն է:

2021 թ. հրապարակված «Եվրոստուդենտ»-ի վերջին՝ յոթերորդ փուլի զեկույցում առանձնահատուկ շեշտվում է «քովիդ-19» համավարակի ազդեցությունը սոցիալական ուղղվածության վրա, և ներկայացվել են այն լրացուցիչ խոչընդոտները, որոնց հետ համավարակի ընթացքում բախվել են ԵԲԿՏ բուհերի ուսանողները: Հետազոտության հիմնական եզրահանգումներից է այն, որ համավարակն ուժգին հարված է հասցրել բարձրագույն կրթության հավասար մատչելիությանը և սոցիալական ներառմանը, ինչի բացասական ազդեցությունն առաջիկա տարիներին էլ ավելի նկատելի կդառնա[23]:

Ստորև հանրագումարի են բերված սոցիալական ուղղվածության վերաբերյալ տարբեր խորքային հետազոտություններից բխող հիմնական եզրահանգումները:

- ԵԲԿՏ երկրները միմյանցից էապես տարբերվում են իրենց վարած սոցիալական քաղաքականություններով, որոնք ընդգրկում են պետության կողմից ուսանողների ուսման վարձերի ամբողջական փոխհատուցումից (իրենց երկրի քաղաքացի հանդիսացող բոլոր ուսա-

---

[22] Տե՛ս նույն տեղը:

[23] Տե՛ս **Hauschildt K., Gwosć C., Schirmer H., Wartenbergh-Cras F**., Social and Economic Conditions of Student Life in Europe, EUROSTUDENT VII: Synopsis of Indicators 2018-2021, 2021, էջ 10, https://www.eurostudent.eu/download_files/documents/EUROSTUDENT_VII_Synopsis_of_Indicators.pdf

նողների համար անվճար բարձրագույն կրթության ապահովում) մինչև բոլոր ուսանողների կողմից ուսման վարձերի վճարում, ուսանողներին աջակցության ծառայությունների գրեթե ամբողջական բացակայությունից մինչև դրանց մատուցում բոլոր ուսանողներին: Ուսման վարձերի չափերը և ուսանողական աջակցության ծրագրերը ևս խիստ տարբերվում են: Որոշ երկրներում պետությունն ուսանողներին տրամադրում է միայն կրթաթոշակներ, մյուս մասում՝ կրթաթոշակներից բացի, հատկացնում է նաև պետական ուսանողական վարկեր, դրամաշնորհներ, սոցիալական ծառայությունների փաթեթներ կամ հարկային արտոնություններ ընտանիքներին[24]:

➢ Բոլոր երկրներում սոցիալական ուղղվածության բազմաթիվ խնդիրներ կան, և դրանց լուծման ուղղությամբ *«դեռևս անելիքները շատ են»*[25]*:* Մինչդեռ ԵԲԿՏ շատ քիչ երկրներ են սահմանել հստակ թիրախներ՝ ուղղված բարձրագույն կրթության մեջ բնակչության աղքատ և խոցելի այլ խմբերի ընդգրկվածությունը բարձրացնելուն: Խնդրի լուծման համար երկրները կիրառում են զանազան մեխանիզմներ, որոնցից ամենատարածվածներն են՝

- հասցեական ֆինանսական աջակցության ու տարատեսակ սոցիալական ծառայությունների տրամադրում բնակչության աղքատ և խոցելի խմբերից ուսանողներին,
- բուհ ընդունվելու այլընտրանքային մեխանիզմների կիրառում, այդ թվում՝ նպատակային տեղերի սահմանում աղքատ և խոցելի խմբերից դիմորդների համար,
- բնակչության աղքատ և այլ խոցելի խմբերից ուսանողների ընդգրկվածության աճի ապահովում բուհերում ընդհանուր ընդգրկվածության բարձրացման միջոցով[26]:

➢ Աղքատ խավի համար ուսման վարձերը բարձրագույն կրթություն ստանալու հիմնական խոչընդոտն են, բայց ուսանողների սոցիալական աջակցության գործուն կառուցակարգերը կարող են դառնալ արդյունավետ հակակշիռ: Ուստի կարևոր է ուսման վարձերի և սոցիալական աջակցության ծրագրերի միջև հավասարակշռության ապահովումը[27]:

➢ Բուհերի շրջանավարտների հետագա աշխատանքային հնա-

---

[24] Տե՛ս European Commission /EACEA/, Eurydice, Modernisation of Higher Education in Europe 2011: Funding and the Social Dimension, Brussels: Eurydice. 2011, էջ 61, http://www.finhed.org /media/files/12-131EN.pdf

[25] European Commission /EACEA/, Eurydice, Modernisation of Higher Education in Europe: Access, Retention and Employability 2014. Eurydice Report, Luxembourg: Publications Office of the European Union, 2014, p. 9, https://eurydice.org.pl/wp-content/uploads/2015/01 /165EN.pdf

[26] Տե՛ս European Commission /EACEA/ Eurydice, Focus on Higher Education in Europe 2010: The Impact of the Bologna Process. Brussels: Eurydice, 2010, էջ 27, http://www.aic.lv/ bolona/2010/minsterial/FOCUS_HE_2010_EN.pdf_

[27] Տե՛ս European Commission /EACEA/ Eurydice, Modernisation of Higher Education in Europe 2011: Funding and the Social Dimension. Brussels: Eurydice, 2011, էջ 60, http://www. finhed.org/media/files/12-131EN.pdf

բավորությունների, ուղիների և պայմանների մասին հետազոտությունները վկայում են, որ իրենց կրթական աստիճանին համարժեք աշխատանք և բարձր եկամուտ ունենալու հավանականությունը էապես նվազում է այն շրջանավարտների համար, որոնք սոցիալապես անապահով և անբարենպաստ պայմաններ ունեցող ընտանիքներից են[28]:

➢ ԵԲԿՏ երկրներում անհավասարությունները բնակչության բարեկեցիկ և անապահով խմբերից ուսանողների միջև զգալիորեն տարբերվում են միմյանցից թե՛ իրենց բնույթով, թե՛ մասշտաբով, թե՛ հետևանքներով[29]:

➢ Վերջապես, բարձրագույն կրթության վրա «քովիդ-19» համավարակի ազդեցության և դրա պատճառով երկրների որդեգրած քաղաքականությունների ուսումնասիրությունը փաստում է, որ գալիք 10 տարիներին ուսանողների սոցիալական աջակցության խնդիրների լուծումը դառնալու է առաջնահերթ՝ հանգեցնելով այն բանին, որ գալիք տասնամյակը դառնա *«բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության տասնամյակ»*[30]:

II. Հետազոտության մեթոդաբանությունը

Այս հոդվածում ուսումնասիրվել է բարձրագույն կրթության և աղքատության փոխկապակցվածությունը Հայաստանում՝ որպես սոցիալական ուղղվածության առանցքային հարց: Մասնավորապես վերլուծվել են բարձրագույն կրթության ազդեցությունն աղքատության վրա և հակառակը՝ աղքատության ազդեցությունը բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունների վրա: Այդ համատեքստում ուսումնասիրվել են նաև ուսման վարձերին և բարձրագույն կրթությանը վերաբերող այլ ծախսերին առնչվող խնդիրները, որոնք բնակչության տարբեր սոցիալական խմբերի միջև ստեղծում են բարձրագույն կրթություն ստանալու անհավասար հնարավորություններ ու պայմաններ և նրանց համար առաջացնում էական խոչընդոտներ թե՛ բուհ ընդունվելու, թե՛ ուսումնառության ընթացքում առաջադիմելու, թե՛ բուհն ավարտելու:

Հետազոտությունն իրականացվել է ֆինանսատնտեսական վերլուծության և կրթական հետազոտությունների մեթոդաբանական բաղադրիչների համադրմամբ: Կատարվել է աղքատությանը և սոցիալական ուղղվածությանն առնչվող գիտական հետազոտությունների, փաստաթղթերի, վերլուծական և վիճակագրական զեկույցների բովանդակային վերլուծություն, ինչպես նաև տվյալների համադրում և քա-

[28] Տե՛ս **Meng C., Wessling K., Mühleck K. & Unger M**., EUROGRADUATE pilot survey: Design and implementation of a pilot European graduate survey, Publications Office of the European Union, 2020, էջ 19, https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/51f88c2e-a671-11ea-bb7a-01aa75ed71a1/language-en

[29] Տե՛ս **Ballas D., Lupton R., Kavroudakis D., Hennig B., Yiagopoulou V., Dale R., Dorling D**., Mind the gap: Education inequality across EU regions. An independent report authored for the European Commission by the NESSE network of experts; www.nesse.fr., 2012, էջ 13-14:

[30] **Hauschildt K., Gwosć C., Schirmer H., Wartenbergh-Cras F**., նշվ. աշխ., էջ 12-16:

նակական վերլուծություն: Ուսումնասիրվել են նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի, Եվրոպական հանձնաժողովի, Եվրոստատի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Համաշխարհային բանկի և այլ կազմակերպությունների տվյալների բազաները և վիճակագրական զեկույցները, որոնց տվյալների համադրմամբ կատարվել են հաշվարկներ ու համապատասխան եզրահանգումներ: Հետազոտվել են կրթական մի շարք ցուցանիշներ Հայաստանի համար, կատարվել է դրանց հորիզոնական (ժամանակային) և համեմատական վերլուծություն՝ վեր հանելով ցուցանիշների փոփոխության շարժընթացը (դինամիկան) տարիների համար, որոնք համեմատվել են այլ տարածաշրջանների և երկրների համանման ցուցանիշների հետ: Վիճակագրական տվյալների վերլուծությունը և հաշվարկների արդյունքները ակնառու ներկայացնելու նպատակով օգտագործվել են աղյուսակային և գրաֆիկական մեթոդներ:

III.Բարձրագույն կրթության ու աղքատության փոխկապվածությունն աշխարհում և Հայաստանում

Բարձրագույն կրթության և աղքատության փոխկապվածության խնդիրն առկա է անգամ տնտեսապես զարգացած երկրներում, ուստի այն մշտապես գտնվում է պետական մարմինների և լայն հասարակության ուշադրության կենտրոնում, ինչպես նաև հետազոտողների հետաքրքրությունների շրջանակում: Գլոբալ համատեքստում խնդրին անդրադարձել է Համաշխարհային բանկը աշխարհի 91 երկրում իրականացրած հետազոտության մեջ, որի համաձայն՝ *«Մարդկանց աղքատության և կրթական մակարդակի միջև առկա է ուժեղ կապ: Կրթություն չունեցող մեծահասակների ավելի քան 20%-ը աղքատ է: Անգամ տարրական կրթություն ունենալը որոշակի առավելություն է. աղքատության մակարդակը գրեթե կիսով չափ նվազում է նույնիսկ տարրական կրթություն ունեցող մեծահասակների շրջանում: Մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցող անձանց շրջանում աղքատությունը գրեթե ամբողջությամբ բացակայում է»*[31]:

ԱՄՆ-ի կրթության դեպարտամենտը, մշտապես ուսումնասիրելով ուսման վարձերին և բարձրագույն կրթության հետ կապված այլ ծախսերին առնչվող խնդիրները, նշում է.

«Չափազանց մեծ թվով պոտենցիալ ուսանողներ պարզապես չունեն ֆինանսական հնարավորություններ ստանալու այն կրթությունը, որն անհրաժեշտ է նրանց կյանքում հաջողության հասնելու համար, ինչն էլ առաջացնում է մեծ խզում հնարավորությունների միջև: Բարձր եկամուտ ունեցող ամերիկացի ընտանիքների կեսը ստանում է բակալավրի կոչում մինչև 25 տարեկան դառնալը, մինչդեռ ցածր եկամուտ

[31] Poverty and Shared Prosperity 2018: Piecing Together the Poverty Puzzle, International Bank for Reconstruction and Development/The World Bank, 2018, p. 38, https://openknowledge. worldbank.org/bitstream/handle/10986/30418/9781464813306.pdf

ունեցող ընտանիքներից՝ 10 ամերիկացիներից միայն 1-ը: Այսօր բուհը Ամերիկայի սոցիալ-տնտեսական զարգացման ամենակարևոր շարժիչ ուժն է: Սակայն եթե չարվի հնարավորը բուհը ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին հասանելի դարձնելու համար, կարող է տեղի ունենալ հակառակը. բուհը պատնեշ կարող է դառնալ ամերիկյան երազանքի ուղետոմս դառնալու փոխարեն»[32]*:*

Երկրների վիճակագրական տվյալները և ուսումնասիրությունները վկայում են, որ բարձրագույն կրթությամբ մարդիկ ավելի հեշտությամբ են գտնում բարձր վարձատրվող աշխատանք, հետևաբար ունեն բարեկեցիկ ապրելու ավելի լայն հնարավորություններ, քան կրթական ցածր մակարդակ ունեցող անձինք: Բարձրագույն կրթություն չունեցողների համար աղքատության վտանգը շատ ավելի մեծ է, քան բարձրագույն կրթություն ունեցողների: Նշվածն օրինաչափ իրողություն է ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Այսպես՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2020 թ. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցում նշված է. «*Կրթությունը կարող է օգնել մարդկանց դուրս գալ աղքատությունից: Այն դռներ է բացում աշխատանքի առջև: Կրթությունը տալիս է մարդկանց գիտելիք և հմտություններ, որոնք անհրաժեշտ են եկամուտների ավելացման և զբաղվածության հնարավորությունների ընդլայնման համար: Երբ կրթությունն ունի լայն տարածում և հասանելի է աղքատներին, կանանց և խոցելի խմբերին, ապա այն ունի նաև տնտեսական աճի լայն վերաբաշխվածության հեռանկար»*[33]*:*

Նախ պարզաբանենք «աղքատություն» հասկացությունը վերոնշյալ զեկույցի համատեքստում: Աղքատության մակարդակը տվյալ երկրի բնակչության կենսամակարդակի գնահատման քանակական ցուցանիշ է, որը նկարագրվում է նյութական և ոչ նյութական աղքատության տեսանկյունից: Կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը ոչ նյութական աղքատության բաղադրիչներից է, որի հաղթահարման հիմնական գրավականը կրթության մատչելիությունը մեծացնելն է՝ անվճար կրթական ծառայությունների հասցեականության բարելավման կամ մարդկանց վճարովի կրթական ծառայություններից օգտվելու հնարավորությունների աճի միջոցով: Համաձայն նշված զեկույցի՝ Հայաստանի բնակչությունը բաժանվում է աղքատ և ոչ աղքատ (բարեկեցիկ) խմբերի՝ ըստ աղքատության մակարդակի: Աղքատներն իրենց հերթին դասակարգված են 3 խմբի՝ աղքատներ (աղքատության վերին գիծ), չափավոր կամ շատ աղքատներ (աղքատության ստորին գիծ) և ծայրահեղ աղքատներ (ծայրահեղ աղքատության գիծ)[34]: Նույն զեկույցի տվյալնե-

[32] ԱՄՆ պետդեպարտամենտ, https://www.ed.gov/college

[33] «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. ըստ 2019 թ., տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների», ՀՀ վիճակագրական կոմիտե, վիճակագրական - վերլուծական զեկույց, 2020 թ., Եր., էջ 155, https://armstat.am/am/?nid=81&id=2323_

[34] Տե՛ս նույն տեղը, էջ 28-31, https://armstat.am/file/article/poverty_2020_a_2.pdf

րով՝ 2019 թ. Հայաստանում աղքատության մակարդակը, գնահատված նոր մեթոդաբանությամբ, կազմել է բնակչության 43,8%-ը[35]:

Բնակչության տարբեր խմբերում, դասակարգված ըստ աղքատության մակարդակի, բարձրագույն կրթություն ունեցողների մասնաբաժնի տվյալներն ակնառու կերպով արտահայտում են աղքատության և բարձրագույն կրթության միջև ուղիղ կապը Հայաստանում: Այսպես, 2019 թ. Հայաստանում բարձրագույն կրթություն ունեցող 16 և բարձր տարիքի բնակչության շրջանում, որը կազմել է այդ տարիքային խմբի բնակչության 22,7%-ը, աղքատները և չափավոր աղքատները կազմել են 12,1%, իսկ ծայրահեղ աղքատները՝ ընդամենը 0,1%[36]:

Սա նշանակում է, որ բարձրագույն կրթությամբ բնակչության շրջանում ծայրահեղ աղքատներ ըստ էության չկան, իսկ չափավոր աղքատների և աղքատների թիվը բավականին փոքր է:

Մինչդեռ տարրական և թերի միջնակարգ կրթություն ունեցող 16 և բարձր տարիքի բնակչության շրջանում, որը կազմել է այդ տարիքային խմբի բնակչության 11,1%-ը, աղքատները և չափավոր աղքատները կազմել են 70,6%, իսկ ծայրահեղ աղքատները՝ 6,9%:

Պատկերը գոհացուցիչ չէ նաև ընդհանուր և մասնագիտական միջնակարգ կրթություն ունեցող 16 և բարձր տարիքի բնակչության շրջանում, որը կազմել է այդ տարիքային խմբի բնակչության մեծամասնությունը՝ 66,2%-ը: Աղքատները և չափավոր աղքատները բնակչության այս խմբում կազմել են 50,9%, իսկ ծայրահեղ աղքատները՝ 2,5%[37] (տե՛ս գծապատկեր 1):

Համեմատության համար անդրադարձ է կատարվել նաև 2 տարի առաջ իրականացված ուսումնասիրությանը[38], համաձայն որի՝ 2017 թ. Հայաստանում բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում ծայրահեղ աղքատների թիվը եղել է ամենից ցածրը՝ ընդամենը 0,5%: Մեկ այլ դիտարկման համաձայն՝ աղքատ բնակչության շրջանում բարձրագույն կրթությամբ անձինք կազմել են 13,3%, իսկ բարձրագույն կրթություն չունցողները՝ 86,7%, ընդ որում՝ նրանց մեջ ամենամեծ խումբը կրկին եղել են միջնակարգ կրթությամբ անձինք՝ կազմելով աղքատ բնակչության 53%-ը[39]:

---

[35] Հին մեթոդաբանությամբ հաշվարկելու դեպքում 2019 թ. աղքատության մակարդակը կկազմեր 24,9%՝ որոշակիորեն աճելով նախորդ տարվա համեմատ: Աղքատության ցուցանիշները 2020 թ. համար դեռևս հրապարակված չեն:

[36] Տե՛ս նույն տեղը, էջ 38:

[37] Տե՛ս նույն տեղը:

[38] Տե՛ս **Կ. Հարությունյան**, ՀՀ բարձրագույն կրթական համակարգի սոցիալական ուղղվածությունը, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, «Տնտեսագետ» հրատարակչություն, հ. 4 (56), Եր., 2019, էջ 119-141:

[39] Տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018. ըստ 2017 թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների», ՀՀ վիճակագրական կոմիտե, վիճակագրական – վերլուծական զեկույց, Եր., 2018, էջ 56, https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_2.pdf

Գծապատկեր 1

2019 թ. աղքատության մակարդակը Հայաստանում՝ ըստ բնակչության կրթական մակարդակների



Բերված տվյալների համեմատությունից երևում է, որ կրթության մակարդակի և աղքատության կապի առումով իրավիճակը Հայաստանում 2017 թ.-ից մինչև 2019 թ. էականորեն չի փոփոխվել. այն աննշան բարելավվել է, քանի որ 2019 թ. բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում ծայրահեղ աղքատների մասնաբաժինը 2017 թ. համեմատ 0,4%-ով նվազել է:

Եզրակացություններ

➢ Վերը բերված տվյալներից ակնհայտորեն երևում է, որ Հայաստանում կրթական ամենից ցածր մակարդակի՝ տարրական և թերի միջնակարգ կրթությամբ բնակչության խմբում աղքատների և չափավոր աղքատների մասնաբաժինը 5,8 անգամ, իսկ ծայրահեղ աղքատներինը 69 անգամ գերազանցում են բարձրագույն կրթությամբ բնակչության խմբում համապատասխանաբար աղքատների և ծայրահեղ աղքատների մասնաբաժինները:

➢ Անգամ ընդհանուր և մասնագիտական միջնակարգ կրթությամբ բնակչության խմբում աղքատների և չափավոր աղքատների մասնաբաժինը 4,2 անգամ, իսկ ծայրահեղ աղքատներինը 25 անգամ գերազանցում են բարձրագույն կրթությամբ բնակչության խմբում համապատասխանաբար աղքատների և ծայրահեղ աղքատների մասնաբաժինները:

➢ Ուստի կարելի է փաստել՝ որքան ցածր է մարդկանց կրթական մակարդակը Հայաստանում, այնքան մեծ է աղքատության հավանականությունը, իսկ բարձրագույն կրթությունը թույլ է տալիս մարդկանց խուսափել աղքատությունից, հատկապես ծայրահեղ աղքատությունից, և ընձեռում է բավարար եկամուտ վաստակելու և բարեկեցիկ կյանքով ապրելու իրական հնարավորություններ:

КАРИНЕ АРУТЮНЯН – *Взаимосвязь высшего образования и бедности в Армении.* – В настоящее время одной из важнейших характеристик высшего образования является массификация, ведущая к постоянному увеличению числа студентов. Однако основной характеристикой высшего образования по-прежнему является «элитарность» и существенно низкое вовлечение бедных и других уязвимых групп населения в высшем образовании. В данной работе изучена взаимосвязь между высшим образованием и бедностью в Армении, как ключевой вопрос социальной направленности высшего образования, и проведен сравнительный анализ с ситуацией в разных странах. Исследование проводилось путем сочетания методов финансово-экономического анализа и исследований в области образования. Расчеты, основанные на анализе собранных данных, наглядно показывают, что в Армении не обеспечивается равный доступ к высшему образованию, в частности, очень неравны возможности поступления в вузы, учебы и успешного завершения учебы для лиц из бедных и обеспеченных семей. Также выявлено, что плата за обучение и сопутствующие расходы являются основным препятствием для получения высшего образования. Результаты исследования доказывают, что бедность является реальным препятствием в деле получения образования.

Ключевые слова: *высшее образование, бедность, социальная справедливость, социальная направленность, плата за обучение, охват обучением, доступ*

KARINE HARUTYUNYAN – *Relationship Between Higher Education and Poverty in Armenia.* – At present, one of the most important characteristics of higher education is the massification, leading to a continuous increase in the number of those receiving education. However, higher education is still characterized by "elitism" and essential underrepresentation of poor and other vulnerable groups of population. In this paper, the correlation between higher education and poverty in Armenia as a key issue of social dimension has been studied and compared with the situation in different countries. The study was conducted by combining the methods of components of financial and economic analysis with educational research. The analysis of the collected data clearly shows that equity of higher education is not ensured in Armenia; in particular, the opportunities for entry into, progress and successful completion of higher education are critically unequal for young people from poor and prosperous families. The analysis also revealed that tuition fees and other education related costs is the main barrier in terms of receiving higher education. The research findings showed beyond doubt that poverty is a real obstacle in terms of receiving higher education, and not having higher education is a real danger of becoming poor.

Key words: *higher education, poverty, social justice, social dimension, tuition fee, access, enrolment*